ՀՈԴՎԱԾՆԵՐ

ԱՆՎԵՀԵՐ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆԸ

(Սուրեն Սպանդարյանի ծննդյան 100-ամյակի առթիվ)

ՌԵՎԻԿ ԵԶԵԿՅԱՆ

Սովետական ժողովուրդն օրինական հպարտության ու երախտագիտության զգացումով է հիշում լենինյան գվարդիայի աննկուն մարտիկներին, պրոֆեսիոնալ այն հեղափոխականներին, ովքեր հերոսական անմար էջեր են գրել ինքնակալության դեմ մղված պայքարի տարեգրության մեջ։ Բարձր գնահատելով հին աշխարհը գրոհող հեղափոխական լենինյաններին, Լ. Ի. Բրեժնևն ասել է, որ գնալով ավելի ու ավելի լրիվ է բացահայտվում նրանց սխրանքի վեհությունը[1]*։ Լենինյան այդ համաստեղության պայծառ դեմքերից է պրոֆեսիոնալ հեղափոխական, հավատարիմ լենինյան, հրապարակախոս Սուրեն Սպանդարյանը։ Ինչպես իր սերնդակիցներին, Ս. Սպանդարյանին նույնպես բաժին ընկավ մաքառումներով ու պայքարով լի փոթորկալից կյանք։ Ամենուրեք, որտեղ ապրել, շնչել ու գործել է Ս. Սպանդարյանը՝ Անդրկովկասում, Մոսկվայում, թե հեռավոր Սիբիրում, միշտ հավատարիմ է մնացել ընտրած գաղափարին. անձնազոհաբար ծառայել է ժողովրդի ազատագրման վեհ գործին։*

Ս. Սպանդարյանը ծնվել է 1882 թ. դեկտեմբերի 15-ին՝ Թիֆլիսում։ Սերը դեպի գիրն ու գրականությունը նրա մեջ արթնացել է վաղ հասակից։ Դրանում մեծ դեր է խաղացել նրա հոր՝ «Նոր դար» թերթի խմբագիր ու հրատարակիչ, հրապարակախոս Սպանդար Սպանդարյանի ընտանեկան ու գրական միջավայրը։

Դեռևս Թիֆլիսի գիմնազիայում ուսանելիս Ս. Սպանդարյանն աչքի էր ընկնում արտակարգ ընդունակություններով։ Նա ծայրաստիճան ընթերցասեր էր. «Գրքերը լափում էր ուղղակի մի շնչով»[2]*,— վկայում է նշանավոր հայ վիպասան Նար-Դոսը, որն այն տարիներին աշխատում էր «Նոր դարի» խմբագրությունում՝ որպես քարտուղար։*

Ս. Սպանդարյանը կարդում և ուսումնասիրում էր գեղարվեստական, պատմափիլիսոփայական գրքեր։ Դա նշանակալից դեր է խաղում նրա մտավոր զարգացման գործում։ Շուտով նա բուռն հետաքրքրություն է դրսևորում դեպի հասարակական-քաղաքական կյանքը, վերլուծում և գնահատում տեղի ունեցող իրադարձությունները։

Գիմնազիայի բարձր դասարանում Ս. Սպանդարյանը կապվում է սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների հետ, ընթերցում ռուս հեղափոխական դեմոկրատների աշխատությունները։ Այդ շրջանից էլ նա սկսում է ծանոթանալ մարքսիստական գրականության հետ, տարվում հեղափոխական աշխատանքով և ակտիվորեն մասնակցում ՌՍԴԲԿ Թիֆլիսի կազմակերպության գործունեությանը։ Այստեղ էլ 1901 թ. Ս. Սպանդարյանը մտնում է ՌՍԴԲԿ շարքերը։

Ավարտելով Թիֆլիսի արական գիմնազիան, նա 1902 թ. մեկնում է Մոսկվա՝ բարձրագույն կրթություն ստանալու։ Նրա ուսանողական կյանքի հիշարժան տարեթվերից է 1903 թվականը. այդ ժամանակից Ս. Սպանդարյանը նվիրվում է բոլշևիզմին։

---

1 Լ. Ի. Բրեժնև, Լենինյան կուրսով, հ. 2, Երևան, 1970, էջ 101—102։

2 Մշի հայկական մասնաճյուղի արխիվ, Ս. Սպանդարյանի ֆ., գ. № 610։

Համալսարանական ուսումնառության տարիներին ՌՍԴԲԿ կազմակերպության տեղական կոմիտեի նախաձեռնությամբ նա պրոպագանդիստական աշխատանք է կատարում Մոսկվայի «Դուկատ» կոչվող ծխախոտի գործարանի բանվորական կոլեկտիվում։ Այստեղ նա լայն գործունեություն է ծավալում ուսանողության բազմամարդ ցույցերի կազմակերպման, բոլշևիկյան թռուցիկների տպագրման ու տարածման գործում։ 1904 թ. դեկտեմբերի 6-ին Մոսկվայում տեղի ունեցավ ուսանողության վիթխարի ցույց, որի ավանգարդում էր նրա կազմակերպիչներից մեկը՝ Ս. Սպանդարյանը։ Այդ մասին նա հորը գրել է. «Դուք երևի արդեն կարդացած կլինեք Մոսկվայի դեմոնստրացիայի մասին... Դա ահռելի բան էր, գրանդիոզ։ Ցավալին այն է, որ մի քանի ուսանող և ուսանողուհի սպանված են։ Շատերը վիրավորված...։ Չեմ թաքցնում, որ ես մասնակցեցի, բայց հաջողաբար անվնաս դուրս պրծա...»[3]։ Հեղափոխական երիտասարդության վիթխարի ելույթը ճնշելու համար ցարական կառավարությունը ոտքի է հանում հեծյալ կազակների հատուկ զորամասեր և դաժանորեն պատժում ցույցի մասնակիցներին։ Լուսավորության մինիստրի հատուկ հրամանով համալսարանը ժամանակավորապես փակվում է։

Շուտով Ս. Սպանդարյանը ժամանակավորապես մեկնում է արտասահման և, 1905 թ. ապրիլին անցնելով Գերմանիա, հաստատվում է Հայդելբերգում՝ իր համալսարանով Եվրոպայում հռչակված քաղաքում։ Հայդելբերգում Ս. Սպանդարյանը, ստանալով համալսարանում դասախոսություններին ունկնդրելու իրավունք, խորացնում է գերմաներենի իր գիտելիքները։ Շատ շուտով նա գիտելիքների հարուստ պաշարով հիացնում է մտերիմներին։ Ոսկի Տեր-Հովհաննիսյանը վկայում է, որ ամենքը հիացած էին նրանով, «...նամանավանդ, որ ինչ գրքի մասին խոսում են, Սուրենն արդեն կարդացել է... Ճշմարիտ է, ինչ հիանալի և խելոք տղա է»[4]։

Ս. Սպանդարյանի ուշադրությունը, սակայն, ամբողջովին կլանված էր Ռուսաստանում տեղի ունեցող իրադարձություններով և արդեն երեք ամիս անց՝ 1905-ի հունիսին, նա վերադառնում է Թիֆլիս, ընտրվում ՌՍԴԲԿ Կովկասյան կոմիտեի անդամ և սերտ կապեր հաստատում Ստ. Շահումյանի հետ։

Որոշ ժամանակ անց՝ 1905 թ. վերջերին, Ս. Սպանդարյանը մեկնում է Մոսկվա և վերսկսում համալսարանական պարապմունքները։ Շուտով վրա է հասնում դեկտեմբերյան դինված ապստամբությունը, որին ակտիվորեն մասնակցում է նաև Ս. Սպանդարյանը։ Ապստամբությանը մասնակցելու համար բազմաթիվ ուսանողների հետ նա ևս վտարվում է համալսարանի իրավաբանական ֆակուլտետի 3-րդ կուրսից և 1906 թ. գարնանը վերադառնում Թիֆլիս։ Այնտեղ նա լայն գործունեություն է ծավալում մասնավորապես հայ բանվորների մեջ։ Ս. Սպանդարյանն ընտրվում է «Բոլշևիկների գրական բյուրոյի» կազմի մեջ և մեծ աշխատանք կատարում հայ բոլշևիկյան մամուլի ստեղծման ուղղությամբ։ Ստ. Շահումյանի և Ս. Կասյանի հետ միասին նա խմբագրում է «Կայծ» և «Նոր խոսք» լեգալ թերթերը, որոնք հսկայական դեր խաղացին լենինյան գաղափարների տարածման, հայ աշխատավորության հեղափոխական զարթոնքի գործում։ Հետագայում Ս. Սպանդարյանը դարձավ «Բակինսկի պրոլետարի», «Գուդոկ», «Բակինսկի ռաբոչի» և այլ բոլշևիկյան թերթերի ղեկավարներից մեկը։

Անդրկովկասի բոլշևիկյան կենտրոնի հանձնարարությամբ 1906 թ. ամռանը Ս. Սպանդարյանը ծագած գործադուլի կապակցությամբ մեկնում է Ալավերդի։ Իր շուրջը համախմբելով գործունյա, ակտիվ բանվորներին, այստեղ նա ստեղծում է գործադուլային կոմիտե, որի մեջ են մտնում աչքի ընկնող բանվոր բոլշևիկներ Ս. Փիրուզյանը, Ս. Վերմիշյանը և ուրիշներ։ Բանվորական միտինգներում դիմելով գործադուլավորներին, Ս. Սպանդարյանը

---

3 Ս. Սպանդարյան, Երկեր, հ. 2, Երևան, 1959, էջ 286—287։

4 ՄԼԻ հայկական մասնաճյուղի արխիվ, Ս. Սպանդարյանի ֆ., գ. № 610։

կոչ է անում ավելի ամրապնդել բանվորական շարքերի հեղափոխական միասնությունը։ Մեկ ամիս տևած այդ գործադուլը բանվորների համար դասակարգային կռվման դպրոց հանդիսացավ։ Այդ օրերին Ս. Սպանդարյանը խոշոր աշխատանք է կատարում նաև Գանձակում (Կիրովաբադ) ՌՍԴԲԿ V համագումարի նախապատրաստման ուղղությամբ։ 1907 թ. հունվարին Ս. Սպանդարյանը փոխադրվեց Բաքու՝ կուսակցական անլեգալ աշխատանքի։ Բաքուն՝ բաղմազգ պրոլետարիատի այդ մշտավառ օջախը, նոր հորիզոններ է բացում Ս. Սպանդարյանի առաջ։ Բաքվում Ս. Սպանդարյանը Ս. Օրջոնիկիձեի, Ա. Ջափարիձեի, Վ. Ֆիոլետովի, Մ. Ազիզբեկովի և ականավոր այլ բոլշևիկների հետ միասին կանգնեց տեղի բանվորական շարժման գլուխ։ Նա նշանակվեց Բաքվի արդյունաբերական խոշոր շրջաններից մեկի՝ Սև քաղաքի, կուսակցական կազմակերպիչ և անդուլ եռանդով պայքարեց իրագործելու Բաքվի կոմիտեի ցուցումները։ «Բակինսկի ռաբոչի» թերթի խմբագրությունում Ս. Սպանդարյանը հաճախակի հանդիպումներ է ունենում Ստ. Շահումյանի, խմբագրական կոլեգիայի անդամներ Ա. Ջափարիձեի, Ս. Ցակուշևի, Վ. Սարատովեցի, Ս. Նյուշինի և ուրիշների հետ։ Բաքվի բոլշևիկներին հաջողվում է գաղափարական մարտերում մերկացնել մենշևիկների մանրբուրժուական էությունը, վիժեցնել Բաքվի պրոլետարիատին պառակտելու նրանց փորձերը։ 1907 թ. մայիսի 5-ին Բաքվի բոլշևիկյան կոմիտեի խորհրդակցության ժամանակ ձերբակալվեցին նրա բոլոր մասնակիցները՝ թվով 19 հոգի, այդ թվում և Ս. Սպանդարյանը։ Բանտից ազատվելուց հետո նա հսկայական աշխատանք ծավալեց Սև քաղաքում։ Նա 1908 թ. մայիսի 1-ի վիթխարի գործադուլի կազմակերպիչներից ու ղեկավարներից մեկն էր։ 1909 թ. օգոստոսի 28-ին Ս. Սպանդարյանը կրկին ձերբակալվում է. երեք ամիս Բաքվի բանտում պահվելուց հետո նրան արտաքսում են Դերբենդ, որտեղից էլ 1910 թ. փոխադրվում է Թիֆլիս։

Թիֆլիսում որպես կուսակցության տեղի կոմիտեի անդամ Ս. Սպանդարյանը կատարում է ընդհատակյա կուսակցական աշխատանք, պայքար կազմակերպում լիկվիդատորների, տրոցկիստների և օտզովիստների դեմ։ Բոլշևիկյան պրոպագանդայի համար նա օգտագործում է լեգալ հնարավորությունները և համարձակորեն մերկացնում ցարիզմի ռեակցիոն էությունը։ Նա թղթակցում է Թիֆլիսի «Նովայա ռեչ» և «Կուրյեր-կոպեյկա» թերթերին։ Իր հոդվածներում Ս. Սպանդարյանը պրոլետարիատին խորհուրդ էր տալիս չվախենալ դժվարություններից, հաղթահարել «մեռյալ կետը», վստահորեն պատրաստվել հեղափոխության նոր վերելքին։ Նա գտնում էր, որ հեղափոխության ժամանակավոր անկման պահին չպետք է ընկնել ռեակցիոն պրոպագանդայի ազդեցության տակ և կոչ էր անում ամրապնդել կապը մասսաների հետ, քաղաքականապես լուսավորել նրանց։ «Նամակներ քաղաքային ինքնավարության մասին» հոդվածում Ս. Սպանդարյանը գրել է. «Պատմությունը քշել և դրել է մեզ անհրապույր մի կացության մեջ, բայց միթե այդ պատճառով մենք պիտի ծալենք մեր «հզոր ձեռքերը դատարկ կրծքերի վրա»։ Ընդհակառակը,— աշխատել և աշխատել ամեն տեսակ պայմաններում»[5]։

1911 թ. փետրվարին Ս. Սպանդարյանը մասնակցում է ժողովրդական համալսարանների Թիֆլիսի ընկերության անդամների ընդհանուր ժողովին և ելույթ է ունենում վարչության հաշվետու զեկուցման առթիվ։ Այդ նույն ժամանակ նրա ղեկավարությամբ կազմակերպվեց Թիֆլիսի բոշևիկյան խումբը՝ իրեն անվանելով Թիֆլիսի կազմակերպության վերականգնման կազմակերպական կոմիտե։ Բոլշևիկյան այդ խումբը վերականգնեց կուսակցական անլեգալ բջիջները, հրատարակեց մայիսմեկյան թռուցիկ և «Ընկեր բանվորներ» կոչը։ 1911 թ. օգոստոսին Ս. Սպանդարյանը մասնակցում է ՌՍԴԲԿ Թիֆլիսի խմբի ղեկավար խմբակի նիստին, որտեղ համակուսակցական կոնֆերանսի հրավիրման մասին զեկուցում է Ս. Օրջոնիկիձեն։ Թիֆլիսի բոլշևիկները հա-

---

5 Սուրեն Սպանդարյան, Երկեր, հ. 1, Երևան, 1959, էջ 302։

վանություն տվեցին համակուսակցական կոնֆերանսի հրավիրման մասին ՌՍԴԲԿ Կենտկոմի հունիսյան խորհրդակցության որոշմանը։

Աշխատանքի դժվարին պայմաններում Ս. Սպանդարյանն աներեր պայքարում էր հեղափոխական կուսակցության վերականգնման համար։ Նա առանձնապես լայն գործունեություն է ծավալում կուսակցության VI՝ Պրագայի, կոնֆերանսի հրավիրումը նախապատրաստելու ուղղությամբ։ Ս. Սպանդարյանն ընտրվում է կոնֆերանսի նախապատրաստման Ռուսաստանյան կազմակերպական հանձնաժողովի (ՌԿՀ) անդամ, որը կազմվեց Վ. Ի. Լենինի նախաձեռնությամբ՝ 1911 թ. աշնանը։ Հանձնաժողովի աշխատանքները գլխավորում էր Ս. Օրջոնիկիձեն։ Որպես ՌԿՀ-ի անդամ, Ս. Սպանդարյանը շրջագայում է մի շարք քաղաքներ, լինում է Մոսկվայում, Պետերբուրգում, Ռիգայում, կազմակերպում կուսակցական կոնֆերանսի պատգամավորների ընտրությունը, պայքարում լիկվիդատորների դեմ, որոնք ամեն միջոցի դիմում էին՝ կոնֆերանսի գումարումը վիժեցնելու համար։ Բաքվի կազմակերպության պատգամավոր Ս. Սպանդարյանը 1912 թ. հունվարին մեկնում է արտասահման, սկզբում Փարիզ, ապա՝ Պրագա։

Ս. Սպանդարյանը Պրագայի կոնֆերանսում առաջին անդամ հանդիպում է Վ. Ի. Լենինի հետ, և նրանց միջև հաստատվում է ջերմ բարեկամություն։ Կոնֆերանսում Ս. Սպանդարյանը հանդես է դալիս Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների գործունեության մասին զեկուցումով։

Պրագայի կոնֆերանսը կուսակցության կյանքում փաստորեն համագումարի նշանակություն ունեցավ և մեծ դեր խաղաց բոլշևիկյան կազմակերպությունների ամրապնդման գործում։ Ընտրվեց բոլշևիկյան կուսակցության Կենտրոնական կոմիտե՝ Վ. Ի. Լենինի գլխավորությամբ։ Վ. Ի. Լենինի առաջարկությամբ Պրագայի կոնֆերանսում Ս. Սպանդարյանն ընտրվեց Կենտկոմի և նրա Ռուսական բյուրոյի անդամ։

Կոնֆերանսից անմիջապես հետո Ս. Սպանդարյանը Վ. Ի. Լենինի և Կենտկոմի մյուս անդամների հետ մեկնեց Լայպցիգ՝ կատարելով Կենտկոմի կարևոր հանձնարարությունները։ Վ. Ի. Լենինի հանձնարարությամբ Ս. Սպանդարյանը և Ն. Պոլետաևը մեկնում են Բեռլին՝ բոլշևիկյան դրամական միջոցները Կաուցկուց ետ ստանալու համար։ Շուտով Բեռլին եկավ նաև Վ. Ի. Լենինը, որտեղ միջոցառումներ ձեռնարկվեցին Ռուսաստանում կոնսպիրատիվ կուսակցական գրականության առաքման գործը կարգավորելու ուղղությամբ։ Այդ գործում Ս. Սպանդարյանը ներգրավեց իրենց ընտանիքի վաղեմի բարեկամ Ոսկի Տեր-Հովհաննիսյանին, նախապես նրան ծանոթացնելով Վ. Ի. Լենինի հետ։ Ոգևորված կոնֆերանսի որոշումներով և Վ. Ի. Լենինի հետ ունեցած հանդիպումներով, Ս. Սպանդարյանը Կենտկոմի որոշմամբ հանդես եկավ Մերձբալթյան երկրամասում, Պետերբուրգում և Անդրկովկասում՝ տեղի բոլշևիկյան կազմակերպություններին հաղորդակից դարձնելով Պրագայի կոնֆերանսի որոշումների մասին։ Բաքվի Բալախանի կոչվող թաղամասում 1912 թ. մարտի 18-ին տված զեկուցման ժամանակ Ս. Սպանդարյանը ձերբակալվում է և բերվում Թիֆլիս՝ Մետեխի բանտ։ Վ. Ի. Լենինը և Ն. Կրուպսկայան 1912 թ. մայիսի 5-ին այցելում են Բեռլինում ապրող Ս. Սպանդարյանի հորը՝ որդու ձերբակալման մանրամասնություններն իմանալու համար։ Այդ մասին Ն. Կրուպսկայան իր հուշերում գրել է. «Սուրենի հայրը, հիվանդ ծերունի, ապրում էր միայնակ ու աչքաթող... Իլյիչը չափազանց խղճաց ծերունուն, իսկ Բաքվից ստացված լուրերը ուրախալի չէին։ Սուրենը նստած էր բանտում սաստիկ ծանր պայմաններում... Երբ վերադարձանք տուն, Իլյիչը անմիջապես նստեց նամակ գրեց Ոսկուն՝ խնդրելով, որ հոգ տանի երկու Սպանդարյանների մասին»[6]։

Ահա մի քաղվածք Ոսկի Տեր-Հովհաննիսյանին Վ. Ի. Լենինի գրած նամակից.

---

6 Ն. Կրուպսկայա, Հիշողություններ, Մոսկվա, 1933, էջ 69։

«5/5, 12 Փարիզ...

Չգիտեմ, հայտնի՞ է, արդյոք, Ձեզ մի տխուր լուր մեր ընդհանուր բարեկամի՝ Սուրեն Սպանդարյանի մասին, որն ինձ Ձեզ հետ ծանոթացրեց Բեռլինում։ Նա Բաքվում ձերբակալված է։ Նրա կինը գրում է հորը, որ նրա մասին հոգ տանող չկա...։ Մարդ չկա, որ նրան կաթ տանի և այլն։ Հայրն ինձ ասաց, որ ինքը Բաքվում շատ ծանոթներ ունի և որ մեկին գրել է։ Ինչո՞ւ միայն մեկին՝ չգիտեմ։ Սպանդարյանի հայրը ապրում է այստեղ։ Նա շատ հիվանդ է և ծեր տեսք ունի... Նրա դրությունը շատ տխրալի է, նույնիսկ հուսահատական։ Մենք նրան մի փոքր փոխատվությամբ օգնեցինք, բայց ես, այնուամենայնիվ, վճռեցի գրել ձեզ։ Հավանական է, որ դուք Սպանդարյանի ծանոթներին և բարեկամներին գիտեք թե Բաքվում և թե Փարիզում...

Հույս ունեմ, որ Դուք կանեք՝ ինչ կարող եք՝ երկու Սպանդարյանների համար և այդ մասին մի երկու խոսք կգրեք ինձ...։ Սրտանց ցանկանում եմ ամենայն բարիք և սեղմում եմ Ձեր ձեռքը։ Ձեր Լենին»[7]։

1913 թ. մայիսին Ս. Սպանդարյանը, Ե. Ստասովան, Վ. Շվեյցերը և ուրիշներ, Թիֆլիսի դատաստանական պալատի որոշմամբ, դատապարտվում են ցմահ աքսորի՝ Սիբիրում։ Իսկ նույն թվականի աշնանը Ս. Սպանդարյանին և նրա ընկերներին շղթայակապ աքսորում են Սիբիր։

1913 թ. հոկտեմբերի 10-ին աքսորյալները հասան Կրասնոյարսկ։ Սպանդարյանին նետեցին տեղի փոխադրական բանտը, իսկ մի քանի օր անց ուղարկեցին նշանակված աքսորավայրը՝ Ենիսեյսկի նահանգի Կանսկ գավառի Իննոկենտևսկայա գյուղը։ Նա այստեղ ևս աքսորյալների ու տեղի բնակչության շրջանում հեղափոխական գործունեություն ծավալեց։ Բացի այդ, սկսեց ազգային հարցի մասին աշխատություն գրել։

Աքսորավայրում էլ Ս. Սպանդարյանը շարունակում էր գրավոր կապ պահպանել Վ. Ի. Լենինի և Ն. Կրուպսկայայի հետ։ 1914 թ. մարտի 15-ին Վ. Ի. Լենինին հղած նամակում Ս. Սպանդարյանը գրում էր. «Ես, այնուամենայնիվ, հաստատապես հուսով եմ, որ «օրը» հեռու չէ և որ մենք դեռ կպատրաստվենք գործի համար։ Առայժմ այստեղից, որքան հաջողվում է, հետևում եմ բոլոր իրադարձություններին, և սիրտս հրճվում է»[8]։

1914 թ. ապրիլին Ս. Սպանդարյանն անձամբ շրջելով մերձակա գյուղերը, աքսորաբնակ ընկերներին նախապատրաստում էր պրոլետարիատի միջազգային մեծ տոնը՝ Մայիսի 1-ը, նշելու համար։ Այդ առթիվ աքսորական Վ. Խաչատրյանը 1914 թ. մայիսի 26-ի նամակում Ա. Շահինյանին գրել է. «Սուրեն Սպանդարյանը... ապրիլի 26-ին եկավ մեզ մոտ հյուր և խնդրեց մայիսի 1-ին լինենք իրենց մոտ, որպեսզի միասին տոնենք մեր մեծ տոնը։ Չորս օր անց ես և Արմենուհին գնացինք Սուրենի մոտ... Մայիսի 1-ի առավոտյան բոլոր ընկերները, թվով 17 հոգի, հավաքվեցինք Սուրենի սենյակը... Մայիսի 1-ը անցավ շատ ուրախ...»[9]։

Աքսորականների միջև փոխադարձ կապ պահպանելու և նրանց համախմբելու համար ընտրվում է ինֆորմացիոն բյուրո՝ Ս. Սպանդարյանի գլխավորությամբ։ Այդ նույն ժամանակ կայացած Կենտկոմի արտասահմանյան խորհրդակցությունը որոշում է հրավիրել ՌՍԴԲԿ համագումար։ Այդ նպատակով անհրաժեշտ էր կազմակերպել Կենտկոմի աքսորում եղած անդամների՝ Յա. Սվերդլովի, Ի. Ստալինի, Ս. Սպանդարյանի և մյուսների փախուստը։ Այդ գործը հանձնարարվեց Ռ. Մալինովսկուն, որը, ինչպես հետագայում պարզվեց, բոլշևիկների շարքերը սողոսկած պրովոկատոր էր։

Երբ ցարական իշխանություններին Ռ. Մալինովսկու միջոցով հայտնի դարձավ այդ մասին, ոստիկանական դեպարտամենտից անմիջապես Կրասնոյարսկ, Կրասնոյարսկից Ենիսեյսկ և Տուրուխանյան երկրամասի ժանդար-

---

7 Ս. Սպանդարյան, Երկեր, հ. 2, էջ 362—363։

8 Նույն տեղում, էջ 304—305։

9 В. С. Эмексузян, Сурен Спандарян, Красноярск, 1982, с. 55—56.

մական բաժանմունքները ուղարկվեցին հեռագրեր և շտապ գրություններ[10]։ Կայսրության ժանդարմական ապարատը մոբիլիզացվեց։ Ենիսեյսկի ժանդարմական վարչության պետը 1914 թ. մայիսի 13-ին հաղորդում էր, որ «Պերովսկի վոլոստի աքսորաբնակ Սուրեն Սպանդարով Սպանդարյանը պատրաստվում է փախչել և բացի այդ, կազմակերպության կողմից նրան հանձնարարված է նյութեր պատրաստել օգոստոս ամսին Վիեննայում դումարվելիք համագումարի համար»[11]։ Ժանդարմական վարչությունների ստացած մի մատնագրում Ս. Սպանդարյանը բնութագրվում էր որպես «կատաղի լենինյան», «շատ լուրջ սոցիալ-դեմոկրատ»[12]։

Ս. Սպանդարյանը հատուկ կարգադրությամբ մայիսի 26-ին Կանսկի գավառից տեղափոխվեց Տուրուխանյան երկրամասի Մոնաստիրսկոյե գյուղը (այժմ՝ Նովո-Տուրուխանսկի), ուր աքսորված էին Ի. Ստալինը և Յա. Սվերդլովը։ Նա տանջալից ճանապարհ անցավ մինչև նոր աքսորավայր հասնելը։ «Ես արդեն Տուրուխանյան երկրում եմ և ճաշակում եմ նրա բոլոր «հրաշալիքները»[13],— գրել է Ս. Սպանդարյանը կնոջը՝ 1914 թ. հուլիսի 25-ին։

Պետք էր ունենալ կամքի ուժ, անսահման հավատ լավագույն ապագայի նկատմամբ, որպեսզի աքսորականը դիմանար տուրուխանյան ծանր պայմաններին։ Ս. Սպանդարյանի միակ մխիթարանքը կնոջ, երեխաների, ընկերների նամակներն էին։ Նա ջերմ սիրով էր պատասխանում իր դպրոցական երեխաների նամակներին, առաջին հերթին զգուշացնում, խնդրում՝ լսել մայրիկին, օրինակելիորեն կատարել նրա բոլոր հանձնարարությունները, համառ աշխատանքով բարձրացնել գնահատականները։

Երկրորդ աքսորավայրն արդեն մահվան դատավճիռ էր Ս. Սպանդարյանի նկատմամբ։ Մոտենում էր 1916 թ. ամառը։ Միայն այն բանից հետո, երբ ցարական ժանդարմները համոզվեցին, որ Ս. Սպանդարյանն ապրում է իր վերջին օրերը, նրան թույլ տրվեց Տուրուխանյան երկրամասից դուրս գալ։ Ս. Սպանդարյանը Մոնաստիրսկոյե գյուղից Ենիսեյսկ մեկնելուց անմիջապես հետո՝ հուլիսի 11-ին, իր դուստր Մարիային գրել է. «Թանկագին բալիկ։ Ես Ենիսեյսկում եմ, պառկած եմ անկողնում... Վատ, շատ վատ եմ զգում ինձ... Գոնե դուք մխիթարեցեք ձեր նամակներով և հանդստացրեք իմ հիվանդ և ըմբոստացած սիրտը»[14]։ Այդ վիճակում էլ նա հոգով առույգ էր, կամքով՝ անընկճելի։ Դրա ապացույցն է 1916 թ. մայիսի 28-ին Վ. Ի. Լենինին և Ն. Կրուպսկայային հասցեագրված նրա նամակը, որտեղ, արտահայտելով իր և ընկերների հաստատակամությունը, վճռականությունը, նա գրում էր. «Թանկագին ընկերներ։ Ձեզ ամենաբոցավառ ողջույն ենք հղում մեր սառն երկրներից։ Մենք հոգով արի ենք և նույնը ցանկանում ենք Ձեզ...»[15]։

Ս. Սպանդարյանը փոխադրվեց Կրասնոյարսկ, քաղաքային հիվանդանոց։ Նա հույս ուներ տեղական բժիշկների օգնությամբ բուժվելու, բայց արդեն ուշ էր։ Այլևս ոչինչ ի վիճակի չէր փրկելու մեծ հեղափոխականի կյանքը։ 1916 թ. սեպտեմբերի լույս 11-ի առավոտյան Ս. Սպանդարյանը մահացավ և աքսորական ընկերների կողմից թաղվեց քաղաքի գերեզմանատանը։ Ս. Սպանդարյանի մահվան առթիվ Ստ. Շահումյանը գրել է. «Հայ իրականության համար Սուրեն Սպանդարյանը, իր կյանքով և իր մահով մի նոր երևույթ է... Սուրենը Ռուսաստանի նոր համապետական կյանքի, ավելի հեռու, միջազգային կյանքի միջավայրի ծնունդն էր... Սուրենը չկա այլևս։ Խոնարհվենք մեր ընկած ընկերոջ հիշատակի առաջ... և շարունակենք այն գործը, որի համար նա ապրեց և մեռավ...»[16]։

10 «Ս. Սպանդարյան. հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր», Երևան, 1939, էջ 402—403։

11 Նույն տեղում։

12 Նույն տեղում, էջ 405—406։

13 Նույն տեղում, էջ 420։

14 Նույն տեղում, էջ 410—411։

15 Նույն տեղում, էջ 409։

16 Ստ. Շահումյան, երկ, հ. 3, էջ 60—61։

Ս. Սպանդարյանը մեռավ տակավին երիտասարդ հասակում իր փայլուն տաղանդի բուռն ծաղկման շրջանում։

Ս. Սպանդարյանի գրական-հրապարակախոսական ժառանգությունը կարևոր արժեք ունի մեր դարի առաջին տասնամյակի հայ և Անդրկովկասի իրականության հասարակական-քաղաքական կյանքի ուսումնասիրման համար։ Ս. Սպանդարյանը բոցաշունչ հրապարակախոս էր։ Նրա ժուռնալիստական-հրապարակախոսական գործունեությունն առավել մեծ թափ ստացավ ռուսական առաջին հեղափոխության և հեղափոխական նոր վերելքի տարիներին։ Նա բացառիկ ուժով սկսեց օգտագործել բոլշևիկյան հրապարակախոսության սուր զենքը՝ հանուն քաղաքական ճիշտ կողմնորոշման։

Իր կարճատև կյանքի ընթացքում Ս. Սպանդարյանը գրել է բազմաթիվ ակնարկներ, ժուռնալիստական նոթեր և այլ հոդվածներ։ «Կայծի» էջերում տպագրած իր հոդվածներում նա անողոքաբար մերկացնում էր ինքնակալությանը, հեղափոխության թշնամիներին. հանգես բերում գաղափարական կռիվ մղելու բացառիկ ուժ և տաղանդ։ Ս. Սպանդարյանը հավատով էր լցված հեղափոխության հաղթանակի նկատմամբ։ Դեռևս 1906 թ. հունիսին նա գրել է, որ սոցիալիստական հեղաշրջման հարցն անխուսափելիորեն վաղվա հարց է դարձել։

Բոլշևիկ-հրապարակախոսի հետաքրքրությունների շրջանակը մեծ էր ու լայն։ Նա անդրադարձել է ինչպես օրվա հրատապ հարցերին՝ ներքին ու արտաքին կյանքում կատարվող կարևոր տեղաշարժերին, այնպես էլ գրականության, արվեստի ու մշակույթի հետ կապված բազմաթիվ խնդիրների։ Այստեղ ցայտուն կերպով դրսևորվել են Ս. Սպանդարյանի բարձր պատրաստականությունը, մեծ եռանդն ու կրքոտությունը։

Ստ. Շահումյանի և Ս. Կասյանի հետ միասին նա ձեռնամուխ եղավ հայ բոլշևիկյան մամուլի ստեղծման ու զարգացման գործին՝ իր պրակտիկ հեղափոխական աշխատանքը զուգակցելով տեսական-հրապարակախոսական գործունեության հետ։ Հրապարակախոսությունը և ժուռնալիստիկան եղել են նրա տարերքը, կենսական պահանջը։ Նա ուներ բեղմնավոր գրիչ և կարողանում էր արագորեն արձագանքել օրվա դեպքերին, պրոլետարիատի դասակարգային տեսակետից գնահատել իրադարձությունները։ Լենինյան շնչով գրված նրա հոդվածները բոլշևիկյան մարտական հրապարակախոսության փայլուն նմուշներ են, որոնք ընդգրկում են հարցերի լայն շրջանակ։ Հեղափոխության մասին մարքս-լենինյան տեսության, բոլշևիկյան կուսակցության ստրատեգիայի ու տակտիկայի, գյուղացիության, ազգային-ազատագրական շարժումների նկատմամբ պրոլետարիատի վերաբերմունքի, նոր տիպի մարքսիստական կուսակցության կազմակերպական սկզբունքների, արհեստակցական միությունների, զանազան դասակարգերի ու կուսակցությունների քաղաքականության գնահատման, մշակույթի, կրթության, գրականության, թատրոնի և բազմաթիվ այլ հարցերի է անդրադարձել Ս. Սպանդարյանը։ Նա բաց չէր թողնում աշխատավորական լայն զանգվածներին հաղորդակից լինելու ոչ մի հնարավորություն, թշնամիներին մերկացնելու ոչ մի առիթ։ Այդ տեսակետից նա վարպետորեն օգտագործում էր ժամանակակից թե՛ լեգալ և թե՛ անլեգալ մամուլը։

Ս. Սպանդարյանի գործունեության սկզբնական շրջանի հոդվածների զգալի մասը նվիրված է ռուսական առաջին հեղափոխությունում բոլշևիկյան կուսակցության տակտիկայի պրոպագանդային ու պաշտպանությանը։ «Դարձյալ ամնիստիայի մասին», «Հեղափոխության ալիքը բարձրանում է», «Ներկա մոմենտը», «Պետական դումայի ընտրությունների շուրջը» և մի շարք այլ հոդվածներում Ս. Սպանդարյանը մերկացնում էր մենշևիկների օպորտունիզմը տակտիկական հարցերում, սահմանադրական պատրանքներ սերմանելու վնասակարությունը, հիմնավորում համաժողովրդական զինված ապստամբության միջոցով ցարիզմի տապալման անհրաժեշտությունը։ Այդ շրջանում գրված հոդվածներում նա նաև պաշտպանում էր ագրարային հարցում

բոլշևիկյան ծրագիրը, պրոպագանդում բանվոր դասակարգի ու գյուղացիության դաշինքի անհրաժեշտությունը և լուսաբանում կուսակցական կազմակերպությունների խնդիրները գյուղում։ Տեղին է նշել, որ նա անմիջապես զբաղվել է նաև կուսակցական շինարարության պրակտիկ հարցերով։

«Բանվորական պրոֆեսիոնալ միությունների մասին», «Պրոֆեսիոնալ միությունները և Հ. Հ. Դաշնակցությունը» և մյուս հոդվածներում Ս. Սպանդարյանը լուսաբանում էր արհեստակցական միությունների նկատմամբ բոլշևիկների դիրքը և քննադատում մենշևիկների և բուրժուաազգայնական կուսակցությունների հայացքներն արհմիութենական շարժման հարցերում։

«Բակինսկի ռաբոչի» թերթի 1908 թ. հոկտեմբերի 4-ի համարում տպագրած «Հերթական խնդիրները» հոդվածում Ս. Սպանդարյանը տալիս էր նավթային արտադրության և նավթարդյունաբերական պրոլետարիատի դրության ցայտուն վերլուծությունը հեղափոխության պարտությունից հետո և նշում նոր իրադրության պայմաններում կապիտալիզմի դեմ պայքարելու համար արհմիություններում գործադուլային ֆոնդեր ստեղծելու անհրաժեշտությունը։ «Բաքվի բանվորական շարժման մեջ,— գրում էր նա,— անշուշտ շրջադարձ է նկատվում... Սկսվում է մի նոր դարաշրջան։ Այդ է վկայում մեր գործադուլային նավթարդյունաբերական կյանքի յուրաքանչյուր օրը, այդ են ցույց տալիս կապիտալի հարձակման և բանվորների նահանջի փաստերը»[17]։ Այնուհետև Ս. Սպանդարյանը նշում էր, որ «Այժմյան պայմաններում գործադուլային ֆոնդ ստեղծելու խնդիրը պետք է լինի հրամայական և անհետաձգելի»[18]։

«Բանվորների ինքնակրթության ընկերությունները» հոդվածում նա բանվորներին կոչ էր անում անողոք պայքար հայտարարել բուրժուական ռեակցիոն գաղափարախոսությանը, հրաժարվել բուրժուական ընկերություններից ու հիմնել իրենց զուտ պրոլետարական ընկերությունները։ «Գիտակցությունը,— գրում էր նա,— բանվոր դասակարգի պայքարի հաջողության կարևորագույն պայմաններից մեկն է։ Յուրաքանչյուր կազմակերպության համար հիմնաքարը, այդ նրա անդամների գիտակցությունն է...»[19]։

Լինելով խորապես կրթված մարքսիստ, Ս. Սպանդարյանը մեծ ուշադրություն էր նվիրում գիտական սոցիալիզմի գաղափարների պրոպագանդմանը։ «Գործազրկության մասին» հոդվածում նա խոսում է մարքսիստական ուսմունքի, արտադրության կապիտալիստական ձևի, նրա հիմնական հակասությունների հասարակության հեղափոխական վերակառուցման ուղիների մասին։ Ս. Սպանդարյանը բուրժուական ազգայնականության վճռական թշնամի էր։ Ինչպես հայ հասարակական մտքի մյուս բնագավառների, նույնպես և գրականության նկատմամբ Ս. Սպանդարյանը, կիրառելով կուսակցականության լենինյան սկզբունքը, ամբողջ սրությամբ առաջ քաշեց ազգայնականության և ազգային սահմանափակության դեմ անողոք պայքարի խնդիրը։ Այդ մասին Ս. Սպանդարյանը գրում էր. «Հայ իսկական դեմոկրատական ինտելիգենցիան պետք է գրականությունը մոտեցնի ժողովրդին, այն դարձնի ժողովրդական՝ բառիս իսկական իմաստով, և այն ժամանակ իրենց գրողներին կմեծարեն բնակչության լայն խավերը...»[20]։

Նա խորին ակնածանքով ու ջերմությամբ էր խոսում ռուսական առաջավոր գիտության ու գրականության մասին։ «Թիֆլիս, 13 հունվարի» վերնագրով հոդվածում, որը գրված է Մոսկվայի համալսարանի 156-ամյակի առթիվ, Ս. Սպանդարյանն անդրադառնում է ռուս մեծ հեղափոխական դեմոկրատներ Վ. Բելինսկու, Ա. Գերցենի, Ն. Օգարևի և ռուսական կյանքի այլ ջահերի պատմական մեծ դերին։

---

17 Վ. Ավետիսյան, Սուրեն Սպանդարյան, Երևան, 1951, էջ 128—129։

18 Նույն տեղում, էջ 130։

19 Նույն տեղում։

20 «Новая речь», 1910, № 96.

Ս. Սպանդարյանի մատհոգության առարկան էին ոչ միայն աշխատավորական բնակչության կրթության ու լուսավորության հարցերը, այլև մատաղ սերնդի, մանուկների ու պատանիների դաստիարակության, կրթության խնդիրները։ Իր հոդվածներից մեկում նա գրել է. «Ոչ թե հնչուն ֆրազներով, այլ անդուլ աշխատանքով, մեր ամենօրյա համեստ աշխատանքով, մեր ուժերի ներածին չափ ու ողջ մեր գիտակցությամբ ծառայենք մեր բազմացեղ ու բազմատանջ երկրամասի ժողովրդական մասսաների հասարակական ինքնագիտակցության արթնացման ու զարգացման գործին»[21]։

Ս. Սպանդարյանը հետևողական ինտերնացիոնալիստ էր, ժողովուրդների բարեկամության ջերմ պաշտպան։ Նա մշտապես պայքարելով ազգայնականության դեմ, պրոպագանդում էր պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարներ, բազմազգ աշխատավորներին դաստիարակում եղբայրական համերաշխության ու միասնության ոգով։ Իր հոդվածներում նա խարդանում էր հայկական իրականության մթնոլորտը թունավորող բոլոր կարգի ազգայնականներին։ Նրա յուրաքանչյուր հոդվածը դիպուկ հարված էր բանվոր դասակարգի թշնամիներին։ «Կովկասում ապրող բոլոր ազգությունների ոտորին խավերը,— գրել է Ս. Սպանդարյանը,— միմյանց հետ ամրապես զոդված են նյութական կարիքի այն կապերով, որ ընդհանուր են նրանց բոլորի համար...»[22]։

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում Ս. Սպանդարյանի նամակները Վ. Ի. Լենինին և իր հարազատներին։ Ս. Սպանդարյանի գրական ժառանգությունը վկայում է անվեհեր հեղափոխականի մեծ կամքը, նրա անսահման նվիրվածությունը կուսակցությանը, Վ. Ի. Լենինին, բանվոր դասակարգին, նրա համոզվածությունը լենինյան գաղափարների հաղթանակին։ «Ես և կուսակցության Կենտրոնի բոլոր աշխատողները Սուրեն Սպանդարյանին ճանաչում էինք 1908—1909 թվականներին։ Շատ գնահատելի ու աշխի ընկնող աշխատող էր, ...նշանավոր հեղափոխական...»[23]։ *Այս տողերը Վ. Ի. Լենինը գրել է 1921 թ. հունիսի 11-ին՝ ՌԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարությանն ուղղած նամակում։*

Այն, ինչ կատարեց Ս. Սպանդարյանը հեղափոխության համար, վառ կերպով ապրում է սովետական ժողովրդի սրտում, ժողովուրդ, որը մեծարում է իր անձնվեր զավակներին։

БЕССТРАШНЫЙ РЕВОЛЮЦИОНЕР
(К 100-летию со дня рождения Сурена Спандаряна)

РЕВИК ЕЗЕКЯН

Резюме

Исполнилось 100-летие со дня рождения Сурена Спандаровича Спандаряна—ученика и соратника В. И. Ленина, выдающегося деятеля Коммунистической партии, пламенного публициста.

Славный путь борьбы прошел бесстрашный революционер С. Спандарян, который органически сочетал каждодневную практическую работу с вдумчивой теоретической деятельностью, с творческим применением и развитием марксистско-ленинской теории.

Образ и героическая жизнь Спандаряна, верного ленинца, профессионального революционера служат примером безграничной преданности делу Коммунистической партии, революции, делу освобождения трудящегося народа.

---

21 «Листок Копейка», 1910, № 1.

22 «Курьер Копейка», 1910, № 104.

23 *Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 45, էջ 159—160։*